ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 20 մայիսի, 2026 թ.

«Նուբարյան Լաբ» ՍՊԸ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն», «մենք», «մեզ» կամ «մեր») հարգում և գնահատում է Ձեր գաղտնիությունը: Այդ պատճառով մենք մշակել ենք սույն Գաղտնիության քաղաքականությունը՝ բացատրելու համար, թե ինչպես ենք հավաքում, օգտագործում, բացահայտում (բացառապես օրենսդրական հիմքերով), պահպանում և ջնջում Ձեր անձնական տվյալները և երեխաների անձնական տվյալները, երբ Դուք օգտագործում եք մեր https://worldofgeniuses.am կայքը (այսուհետ՝ «Կայք»), The World of Geniuses վեբ հավելվածը և դրանց հետ կապված ծառայությունները (այսուհետ միասին՝ «Ծառայություններ»), ինչպես նաև մեր հետ այլ հաղորդակցության և փոխգործակցության ընթացքում: Քաղաքականությունը նաև նկարագրում է Ձեր և Ձեր երեխայի անձնական տվյալների մշակումն իրականացնելիս Ձեր իրավունքների և Մեր պարտականությունների շրջանակը:

Մեր կողմից անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը՝ Ձեր հանդեպ ստանձնած պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումն է, ընկերության կանոնադրությամբ հետապնդվող նպատակները, ինչպես նաև ծնողի համաձայնությունը:

Խնդրում ենք ուշադիր կարդալ սույն Գաղտնիության քաղաքականությունը: Եթե դրա որևէ դրույթ Ձեզ անհասկանալի է կամ ունեք լրացուցիչ հարցեր, կարող եք գրել մեզ info@worldofgeniuses.am. էլեկտրոնային հասցեով:

Մուտք գործելով մեզ հետ հաղորդակցության կամ փոխգործակցության որևէ ձև (ներառյալ մեր Կայքը և Ծառայությունները դիտելը կամ այլ կերպ օգտագործելը)՝ Դուք հաստատում եք, որ կարդացել և հասկացել եք սույն Գաղտնիության քաղաքականությունը և համաձայն եք դրանում նկարագրված տվյալների մշակման պրակտիկաներին: Եթե Դուք համաձայն չեք մեր Գաղտնիության քաղաքականության հետ, խնդրում ենք չփոխգործակցել մեր գործունեության որևէ մասի հետ:

Հաշիվ ստեղծելու, Ծառայություններ ձեռք բերելու կամ տրամադրելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրավական

պարտավորություններ կատարելու (ներառյալ Ձեր կողմից երեխայի որոշ անձնական տվյալների հավաքման, օգտագործման և բացահայտման համար ծնողական համաձայնություն տրամադրելը), ինչպես նաև այս քաղաքականությամբ նախատեսված այլ դեպքերում մեզ անհրաժեշտ կլինի որոշակի անձնական տեղեկատվություն: Եթե Դուք որոշեք չտրամադրել պահանջվող տեղեկատվությունը, մենք չենք կարողանա Ձեզ տրամադրել համապատասխան Ծառայությունները կամ դրանց առնչվող գործառույթները:

Կայք այցելելիս Դուք կարող եք նաև բաժանորդագրվել մարքեթինգային հաղորդագրությունների և տեղեկությունների ստացմանը՝ կապված ծառայությունների, ծրագրերի, հատուկ առաջարկների, ակցիաների և Ընկերության նորությունների հետ: Բաժանորդագրությունը լիովին կամավոր է և չի հանդիսանում Ծառայություններից օգտվելու կամ գնումներ կատարելու պարտադիր պայման: Եթե չեք ցանկանում ստանալ նման հաղորդագրություններ, խնդրում ենք չնշել Ձեր էլեկտրոնային հասցեն բաժանորդագրության ձևում:

Օգտագործելով մեր Կայքը և Ծառայությունները՝ Դուք համաձայնում եք հետևել մեր Գաղտնիության քաղաքականությանը: Եթե համաձայն չեք դրա հետ, Դուք չեք կարող օգտվել կամ այլ կերպ օգտագործել մեր Ծառայությունները կամ մասնակցել դրանց:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ 18 ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ: Եթե Դուք անչափահաս եք և դեռ 18 տարեկան չեքչ, Դուք չպետք է ձեռք բերեք կամ օգտագործեք Ծառայությունները առանց Ձեր ծնողի կամ օրինական խնամակալի ուղեկցության և վերահսկողության:

ՀՂՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԿԱՅՔԵՐԻ ՎՐԱ

Մեր Կայքը կարող է պարունակել հղումներ դեպի արտաքին կայքեր, սոցիալական ցանցերի հարթակներ, փլագիններ և հավելվածներ, որոնք պատկանում են երրորդ կողմերին և չեն կառավարվում մեր կողմից: Այս երրորդ կողմի կայքերն ու ծառայությունները ունեն իրենց սեփական պայմաններն ու գաղտնիության քաղաքականությունները, և մենք խորհուրդ ենք տալիս ուշադիր ծանոթանալ դրանց: Մենք չենք վերահսկում այդ երրորդ կողմի կայքերն ու ծառայությունները, պատասխանատվություն չենք կրում դրանց գաղտնիության վերաբերյալ հայտարարությունների համար, և Դուք դրանք օգտագործում եք Ձեր սեփական ռիսկով:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՆ, ՈՐԸ ՄԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ ԵՆՔ

Մենք օգտագործում ենք «անձնական տվյալներ», այն ներառում է այն տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս նույնականացնել Ձեզ (օգտատիրոջը և (կամ) երեխային) և կարող է օգտագործվել վերջիններիս ինքնությունը պարզելու կամ Ձեզ հետ կապ հաստատելու համար: Այլ կերպ՝ այն ներառում է ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող ֆիզիկական անձին (տվյալների սուբյեկտ):

Անձնական տվյալների մշակում՝ ցանկացած գործողություն կամ գործողությունների շարք, որը կատարվում է անձնական տվյալի կամ անձնական տվյալների ամբողջության նկատմամբ՝ ավտոմատացված կամ ոչ ավտոմատացված եղանակով, ինչպիսիք են անձնական տվյալների հավաքագրումը, գրանցումը, կազմակերպումը, պահպանումը, հարմարեցումը կամ փոփոխումը, որոնումը, ուսումնասիրումը, օգտագործումը, փոխանցման միջոցով բացահայտումը, տարածումը կամ այլ կերպ հասանելի դարձնելը երրորդ անձանց,
համապատասխանեցումը կամ համադրումը, սահմանափակումը, ջնջումը կամ ոչնչացումը,

անձնական տվյալ՝ վերաբերում են այն տեղեկատվությանը, որը Մեզ հնարավորություն է տալիս նույնականացնել ծառայություններից օգտվողին, և օգտատիրոջը և կարող է օգտագործվել օգտատիրոջ կամ երեխայի ինքնությունը պարզելու կամ վերջինիս հետ կապվելու նպատակով, այսինքն՝ ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող ֆիզիկական անձին (այլ կերպ՝ տվյալների սուբյեկտ), այն ներառում է, սակայն չի սահմանափակվում նույնականացվող անձի ֆիզիկական և մտավոր առանձնահատկությունների վերաբերյալ տվյալները.
ոչ անձնական տվյալներ՝ սույն բաժնի դրույթների համատեքստում անձնական տվյալ չհանդիսացող տվյալ:

Ստորև ներկայացված են անձնական տեղեկատվության այն կատեգորիաները, որոնք մենք կարող ենք հավաքել Ձեզանից կամ Ձեր մասին՝ կախված նրանից, թե ինչպես եք փոխգործակցում մեզ հետ և մեր Ծառայությունների հետ (այսուհետ միասին՝ «Ձեր անձնական տվյալները»):

1

Անձնական տեղեկատվություն, որը տրամադրվում է Ձեր կողմից անմիջապես կամ երրորդ անձանց միջոցով

- **Լրիվ անուն և կոնտակտային տվյալներ** (էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար և այլն). օրինակ՝ երբ Դուք ձեռք եք բերում մեզանից ծառայություններ, ստեղծում եք հաշիվ, տրամադրում եք Ձեր ծնողական համաձայնությունը երեխայի անձնական տվյալների հավաքման, օգտագործման և բացահայտման համար, բաժանորդագրվում եք մեր մարքեթինգային հաղորդագրություններին:
- • **Հաշվի տվյալներ**. եթե Դուք գրանցում եք հաշիվ մեր Կայքում, Ձեզ կարող է անհրաժեշտ լինել տրամադրել որոշ անձնական տվյալներ, ինչպիսիք են Ձեր լրիվ անունը, էլեկտրոնային հասցեն, հաշվի տվյալները և ծննդյան ամսաթիվը: Դուք կարող եք նաև կամավոր տրամադրել լրացուցիչ անձնական տեղեկատվություն, օրինակ՝ Ձեր հեռախոսահամարը:
  Եթե Դուք մուտք եք գործում մեր Կայք կամ միանում եք մեր Ծառայություններին երրորդ կողմի ծառայության միջոցով, օրինակ՝ Google Sign-In-ի, ապա այդ երրորդ կողմի ծառայությունը Ձեր ցուցումով մեզ կփոխանցի Ձեր որոշ անձնական տվյալներ (ներառյալ, բայց չսահմանափակվելով, Ձեր անունը և էլեկտրոնային հասցեն):
  Նման մուտքի ինտեգրման ծառայությունների օգտագործումը կարգավորվում է համապատասխան երրորդ կողմի մատակարարների պայմաններով, գաղտնիության քաղաքականություններով և թույլտվությունների կարգավորումներով: Մենք չենք վերահսկում, թե ինչպես են այդ մատակարարները մշակում Ձեր տվյալները, և խորհուրդ ենք տալիս ծանոթանալ դրանց համապատասխան քաղաքականություններին՝ նման ինտեգրացիաները ակտիվացնելուց առաջ:Մասնավորապես, երբ մեր Կայքը և Ծառայությունները ստանում կամ օգտագործում են Google API-ներից ստացված տեղեկատվություն, այդ հասանելիությունն ու օգտագործումը համապատասխանում են Google API ծառայությունների օգտատերերի տվյալների մշակման քաղաքականությանը, ներառյալ սահմանափակ օգտագործման պահանջները: Դուք ընդունում և համաձայնում եք, որ մուտքի ինտեգրման ծառայությունների օգտագործումը կատարվում է Ձեր հայեցողությամբ և Ձեր ռիսկով, և մենք հրաժարվում ենք ցանկացած պատասխանատվությունից այդ երրորդ կողմի մատակարարների գործողությունների կամ անգործության համար, ներառյալ նրանց կողմից անձնական տվյալների մշակման հետ կապված հարցերը:

- **Հաղորդակցության տվյալներ**. եթե Դուք հաղորդակցվում եք մեզ հետ, օրինակ՝ էլեկտրոնային փոստով, հեռախոսով, մեր Կայքի աջակցման չատի պատուհանի միջոցով, սոցիալական ցանցերում կամ այլ կերպ փոխգործակցում եք մեզ հետ տարբեր հաղորդակցության ալիքներով, ինչպես նաև ուղարկում եք հարցումներ կամ բաժանորդագրվում եք մեր մարքեթինգային հաղորդագրություններին կամ նորություններին, մենք կարող ենք հավաքել Ձեր կողմից տրամադրված անձնական տվյալները, ներառյալ Ձեր անունը, էլեկտրոնային հասցեն և ցանկացած այլ տեղեկատվություն, որը Դուք կամավոր տրամադրել եք, ինչպես նաև Ձեր ուղարկած հաղորդագրությունների բովանդակությունը:
  Եթե Դուք հաղորդակցվում եք մեզ հետ հեռախոսով, զրույցը կարող է ձայնագրվել, այդ թվում՝ մեր երրորդ կողմի ծառայությունների մատակարարների միջոցով: Մենք կարող ենք պահպանել զրույցի ձայնագրությունը և ստեղծել դրա տեքստային վերծանումը (տրանսկրիպտ), այդ թվում՝ ավտոմատ կերպով՝ արհեստական բանականության տեխնոլոգիաների օգնությամբ, ինչպես նաև վերլուծել զանգի բովանդակությունը՝ կիրառելով ԱԲ:
  Բացի այդ, հաճախորդների աջակցությունը և օգտատերերի հետ հաղորդակցությունը բարելավելու նպատակով մեր Կայքում օգտագործում ենք LiveChat՝ երրորդ կողմի ծառայություն, որը տրամադրվում է Text, Inc. ընկերության կողմից: LiveChat-ի տվյալների մշակման վերաբերյալ մանրամասն տեղեկությունը կարող եք գտնել նրանց գաղտնիության քաղաքականությունում՝
  https://www.livechat.com/legal/privacy-policy
  Տեղեկատվության տեսակը (ներառյալ անձնական տվյալները), որը կարող է ստանալ Text, Inc.-ը, ներառում է անունը, ազգանունը, էլեկտրոնային հասցեն, այլ կոնտակտային տվյալներ, չատի բովանդակության տվյալներ և հնարավոր է նաև այլ տեղեկատվություն (օրինակ՝ պրոֆիլի պատկեր, ցանց, օգտանուն, օգտատիրոջ նույնացուցիչ, տարիքային միջակայք, լեզու, երկիր): Այդ պատճառով խնդրում ենք չտրամադրել անձնական տեղեկատվություն չատում, եթե դա բացարձակապես անհրաժեշտ չէ Ձեր հարցի լուծման համար:

Երբեք չնշեք չատում՝ֆինանսական տվյալներ (բանկային քարտերի ամբողջական համարներ, հաշիվներ, PIN կոդեր, CVV կոդեր), գաղտնաբառեր կամ մուտքանուններ Ձեր որևէ հաշիվներից կամ ծառայություններից,
առողջական վիճակի վերաբերյալ բժշկական տեղեկատվություն, ռասայական կամ էթնիկական ծագման, քաղաքական հայացքների, կրոնի կամ այլ համոզմունքների վերաբերյալ տվյալներ, կենսաչափական տվյալներ կամ այլ զգայուն տեղեկատվություն:

Մենք չենք կարող վերահսկել այն տվյալները, որոնք Դուք տրամադրում եք չատում, հետևաբար Դուք ընդունում եք, որ մենք որևէ պատասխանատվություն չենք կրում Ձեր կողմից տրամադրված տվյալների համար՝ անկախ նրանից՝ դա կապված է տվյալների արտահոսքի կամ այլ պատճառների հետ:
Մենք նաև տեղեկացնում ենք, որ չատի զրույցները կարող են ձայնագրվել և պահպանվել: Չատը սկսելով՝ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը զրույցի բովանդակության ձայնագրման, պահպանման և մշակման համար հետևյալ նպատակներով՝

- հաճախորդների սպասարկման որակի ապահովում,
- մեր աշխատակիցների ուսուցում,
- իրավական պահանջների կատարում,
- մեր Ծառայությունների վերլուծություն և բարելավում:

Եթե Դուք համաձայն չեք զրույցի ձայնագրմանը, խնդրում ենք չօգտագործել չատի գործառույթը և կապ հաստատել մեզ հետ այլ եղանակներով:

- **Տվյալներ, որոնք Դուք տրամադրում եք երեխայի անձնական տեղեկատվության հավաքման,** օգտագործման և բացահայտման համար Ձեր ծնողական համաձայնությունը հաստատելու ընթացքում: ՀՀ օրենսդրության համաձայն ՝ մենք իրավունք չունենք հավաքել, օգտագործել կամ բացահայտել որևէ երեխայի անձնական տեղեկատվություն առանց նրա օրինական ներկայացուցիչներից մեկի հաստատված համաձայնության (այսուհետ՝ «Ծնող»): Այդ պատճառով, կախված թեստավորման ծառայության ձեռքբերման եղանակից, Ծնողին կառաջարկվի օգտագործել ծնողական համաձայնության հաստատման այնպիսի մեթոդ, որը համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և նշված կլինի Ծնողին ուղղված համապատասխան ծանուցման մեջ:

Օրինակ՝ եթե Դուք գնում եք ծառայությունը, կարող եք տալ Ձեր հաստատված համաձայնությունը դրա վճարման ընթացքում:

Եթե Դուք օգտագործում եք նվերային սերտիֆիկատ կամ մասնակցում եք Ծառայությունների ֆունկցիոնալության անվճար կամավոր տեխնիկական թեստավորմանը, մեզ անհրաժեշտ կլինի այլ եղանակով հաստատել Ձեր ծնողական համաձայնությունը Ձեր թեստավորվող երեխայի անձնական տեղեկատվության հավաքման, օգտագործման և բացահայտման համար: Այդ գործընթացը կներառի համաձայնություն տվող Ծնողի ինքնության ստուգում անվտանգ մեթոդի միջոցով, որը նույնպես համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Այս քայլը կատարվում է թեստավորվող երեխայի շահերից ելնելով և նպատակ ունի հաստատել, որ համաձայնություն տվող անձը իրականում հանդիսանում է երեխայի ծնողը կամ օրինական խնամակալը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ կիրառելի օրենսդրությանը համապատասխան՝ մենք ձգտում ենք հեշտացնել և բարելավել Ձեր օգտատիրոջ փորձը և մեր փոխգործակցությունը Ձեզ հետ: Դրա համար Ձեզ՝ որպես Ծնող, ուղղված անձնական ծանուցման մեջ մենք առաջարկում ենք մեզ տրամադրել մեկանգամյա ընդհանուր համաձայնություն՝ երեխայի անձնական տեղեկատվության հավաքման, օգտագործման և բացահայտման համար՝ համաձայն այդ ծանուցման մեջ նշված ցանկի և ավելի մանրամասն նկարագրված սույն Գաղտնիության քաղաքականության «Ընկերության տեղեկատվական պրակտիկայի մասին ծանուցում երեխաների վերաբերյալ» բաժնում:

Սա հնարավորություն է տալիս օրինական կերպով խուսափել այն անհրաժեշտությունից, որ Ծնողը յուրաքանչյուր առանձին դեպքում կրկին անցնի վերոնշյալ՝ օրենսդրությամբ նախատեսված ծնողական համաձայնության ստուգման գործընթացը:

- **Վճարումների վերաբերյալ տվյալներ**. եթե Ծառայություններից օգտվելու համար պահանջվում է վճարում (օրինակ՝ թեստավորման համար), մենք կարող ենք երրորդ կողմից ստանալ վճարում իրականացրած անձի անունը և կոնտակտային տվյալները, վճարման եղանակի վերաբերյալ տեղեկատվություն և գործարքների տվյալներ: Վճարումների մշակման ծառայությունները տրամադրվում են համապատասխան հարթակի կողմից:
- **Ձեր երեխայի լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը և սեռը**. օրինակ՝ երբ Դուք, որպես Ձեր անչափահաս երեխայի օրինական ներկայացուցիչ, մեզանից ծառայություններ եք ձեռք բերում, տրամադրում եք Ձեր համաձայնությունը երեխայի անձնական տվյալների հավաքման, օգտագործման և մշակման համար (բացառապես օրենսդրական հիմքերով):
- **Տեսանյութեր, որոնք ավտոմատ կերպով ստեղծվում են երեխայի կողմից թեստավորման անցման ընթացքում կատարվող տեսանկարահանման ժամանակ, ինչպես նաև դրանցից ստացված լուսանկարներ և աուդիոֆայլեր**. մեր Ծառայությունների մատուցման ընթացքում մենք հավաքում ենք երեխայի թեստավորման գործընթացի տեսագրություններ, որտեղ ֆիքսված են թեստավորվողի պատասխանները, գործողությունները, փոխազդեցությունները և վարքագիծը, ինչպես նաև այդ տեսագրություններից ստացված լուսանկարներ և աուդիոֆայլեր: Ծնողը ներկա է լինում թեստավորման ընթացքում և հայտնվում է տեսախցիկի

տեսադաշտում, ուստի տեսագրությունը պարունակում է նաև նրա վիզուալ տվյալները: Մենք հավաքում ենք այս տեղեկատվությունը նաև անվտանգության, գործընթացի թափանցիկության ապահովման և երեխայի մասնակցության համար Ծնողի կամավոր համաձայնության հաստատման նպատակով:

- **Կարծիքներ (feedback)**. կիրառելի լինելու դեպքում մենք կհավաքենք Ձեր կարծիքները՝ ինչպես սահմանված է մեր Օգտատիրոջ համաձայնագրում:
- **Ցանկացած այլ անձնական տեղեկատվություն**, որը մենք չենք պահանջել, սակայն Դուք Ձեր նախաձեռնությամբ մեզ տրամադրում եք:

2

Ավտոմատ հավաքվող անձնական տեղեկատվություն

Ինչպես բազմաթիվ ընկերություններ, մենք նույնպես հավաքում ենք տեղեկատվություն cookie ֆայլերի և նմանատիպ տեխնոլոգիաների միջոցով: Այցելելով մեր Կայքը կամ փոխգործակցելով մեր Ծառայությունների հետ՝ Դուք համաձայնում եք թույլատրել մեզ և այն երրորդ կողմերին, որոնց հետ համագործակցում ենք, օգտագործել cookie ֆայլեր և նմանատիպ տեխնոլոգիաներ Ձեր համակարգչում կամ այլ սարքերում: Դրանց միջոցով մենք ավտոմատ կերպով հավաքում ենք որոշակի տեղեկատվություն, որը կարող է ներառել անձնական տվյալներ:

Այս տեղեկատվությունը չի բացահայտում Ձեր կոնկրետ անձը (օրինակ՝ Ձեր անունը կամ կոնտակտային տվյալները), սակայն կարող է ներառել սարքի և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպիսիք են Ձեր IP հասցեն, դիտարկչի և սարքի բնութագրերը, օպերացիոն համակարգը, լեզվական կարգավորումները, այն URL-ները, որոնցից կատարվել են անցումներ, մոտավոր գտնվելու վայրը, տեղեկատվություն այն մասին, թե ինչպես և երբ եք օգտագործում մեր Կայքը և Ծառայությունները, ինչպես նաև այլ տեխնիկական տեղեկատվություն:

Cookie ֆայլերը և նմանատիպ տեխնոլոգիաները օգտագործվում են մեր Ծառայությունների աշխատանքը ապահովելու և բարելավելու, Ձեր փորձը անհատականացնելու, մեր Կայքի և Ծառայությունների օգտագործման ակտիվությունը վերլուծելու՝ դրանց ֆունկցիոնալությունն ու անվտանգությունը բարելավելու համար, ինչպես նաև Ձեր հետաքրքրություններին համապատասխան գովազդ ցուցադրելու նպատակով:

COOKIE(ՔՈՒՔԻ) ՖԱՅԼԵՐ

Cookie-ը փոքր տեքստային ֆայլ է, որը փոխանցվում է վեբ դիտարկչին այն կայքից, որը Դուք բացում եք: Cookie ֆայլերը պահվում են Ձեր դիտարկչում, որպեսզի Կայքի հիմնական գործառույթները ճիշտ աշխատեն և Ձեր այցելությունը լինի առավել հարմարավետ:

«Նուբարյան Լաբ» ՍՊԸ -ը օգտագործում է այնպիսի cookie ֆայլեր, որոնք անհրաժեշտ են Կայքի և Ծառայությունների աշխատանքի համար: Օրինակ՝ դրանք անհրաժեշտ են Ձեր նույնականացման, ինտերֆեյսի ճիշտ աշխատանքի, օգտատիրոջ սեսիաների պահպանման, Ծառայությունների հարցումների կատարման և Կայքի անվտանգության ապահովման համար:

Ընկերության կողմից cookie ֆայլերի տեղեկատվությունը չի փոխանցվում այլ երրորդ անձանց, բացառությամբ իր այն գործընկերներին փոխանցման, որոնք նույնպես ապահովում են սույն Ծառայությունների պատշաճ մատուցումը Ձեզ:

Բացի մեր սեփական cookie ֆայլերից, մենք օգտագործում ենք նաև մեր գործընկերների երրորդ կողմի cookie ֆայլեր և նմանատիպ տեխնոլոգիաներ Կայքի և Ծառայությունների աշխատանքի շրջանակում: Մասնավորապես՝

- **Վերլուծություն.** PostHog և Google Analytics (GA4) ծառայությունները օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես եք փոխազդում մեր Կայքի հետ, որպեսզի կարողանանք այս տվյալների հիման վրա բարելավել Կայքի և Ծառայությունների ֆունկցիոնալությունն ու հարմարավետությունը:
- **Խարդախության պաշտպանություն.** Google reCAPTCHA գործիքը պաշտպանում է մեր Կայքը սպամ-բոտերից և ավտոմատ չարաշահումներից:
- **Օնլայն աջակցման չատ.** LiveChat ծրագիրը թույլ է տալիս Ձեզ իրական ժամանակում հաղորդակցվել մեր աջակցման ծառայության հետ անմիջապես Կայքում:

Մարքեթինգ և գովազդ. մենք օգտագործում ենք երրորդ կողմի մարքեթինգային և վերլուծական տեխնոլոգիաներ, ներառյալ Meta Pixel, X Pixel և LinkedIn Insight Tag (նաև հայտնի որպես LinkedIn Pixel), մեր գովազդային արշավները օպտիմալացնելու համար: Այս տեխնոլոգիաները թույլ են տալիս իրականացնել ռեմարքեթինգ, հետևել կոնվերսիաներին, վերլուծել գովազդի արդյունավետությունը, ինչպես նաև Ձեզ ցուցադրել անհատականացված գովազդ համապատասխան հարթակներում՝ հիմնվելով Ձեր գործողությունների վրա մեր Կայքում:

Բացի այդ, մեր որոշ գործընկերներ կարող են թույլ տալ իրենց գործընկերներին տեղադրել cookie ֆայլեր կամ նմանատիպ տեխնոլոգիաներ Ձեր սարքում: Մենք չենք վերահսկում նման cookie ֆայլերը և պատասխանատվություն չենք կրում դրանց օգտագործման համար: Խորհուրդ ենք տալիս ծանոթանալ այդ երրորդ կողմի ծառայությունների գաղտնիության քաղաքականություններին՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: Դուք կարող եք օգտագործել Ձեր դիտարկչի կարգավորումները՝ սահմանափակելու cookie ֆայլերի օգտագործումը Ձեր այցելած կայքերի կողմից:

Մեր Cookie ֆայլերի օգտագործման քաղաքականությունում կարող եք ստանալ ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես ենք օգտագործում cookie ֆայլերը և ինչպես կարող եք դրանք կառավարել:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մենք օգտագործում ենք մի քանի ծառայություններ մեր Կայքի և Ծառայությունների օգտագործումը վերլուծելու համար՝ հասկանալու օգտատերերի կարիքները և բարելավելու մեր արտադրանքների աշխատանքը:

- **PostHog**. հարթակը ֆիքսում է տեղեկատվություն Ձեր փոխազդեցության մասին մեր Կայքի և Ծառայությունների հետ, ներառյալ այցելված էջերը, տարրերի վրա կատարված սեղմումները, էջերում անցկացրած ժամանակը, նավիգացիայի ուղիները և այլ իրադարձություններ: Այս տվյալները թույլ են տալիս մեզ հայտնաբերել և վերացնել տեխնիկական խնդիրները, ինչպես նաև բարելավել ինտերֆեյսը և օգտագործման հարմարավետությունը: PostHog-ը յուրաքանչյուր այցելուին տրամադրում է եզակի նույնացուցիչ (օրինակ՝ օգտատիրոջ կամ սարքի ID) և հավաքում է որոշ տեխնիկական տվյալներ, ինչպիսիք են IP հասցեները: Մենք PostHog-ը կարգավորել ենք այնպես, որ հնարավորինս բացառվեն Ձեր Անձնական տվյալները պարունակող դաշտերը (օրինակ՝ Ձեր մուտքագրած տեքստը), այսինքն՝ մենք դիմակավորում ենք զգայուն տվյալները:
- **Simple Analytics**. այս գործիքը կենտրոնացած է գաղտնիության պաշտպանության վրա: Այն տրամադրում է մեզ այցելությունների վերաբերյալ համախմբված տվյալներ՝ առանց անձնական տեղեկատվության հավաքման: Simple Analytics-ը չի օգտագործում cookie ֆայլեր, չի հավաքում Ձեր IP հասցեն և չի հետևում Ձեզ որպես առանձին օգտատիրոջ: Հաշվետվություններում մենք տեսնում ենք միայն ապանձնավորված վիճակագրություն, օրինակ՝ որ աղբյուրներից են եկել այցելուները, դիտարկիչների տեսակները և ընդհանրացված գտնվելու

վայրը՝ ժամային գոտու մակարդակով:

- **Google Analytics 4 (GA4)**. մենք օգտագործում ենք GA4-ը (որի թեգերը միացվում են Google Tag Manager-ի միջոցով)՝ Կայքի տրաֆիկը և օգտատերերի վարքագիծը վերլուծելու, Կայքի դիզայնը և ֆունկցիոնալությունը բարելավելու, ինչպես նաև մեր մարքեթինգային արշավները օպտիմալացնելու համար: GA4-ը հավաքում է որոշակի տեղեկատվություն Ձեր փոխազդեցության մասին մեր Կայքի հետ, ներառյալ Ձեր դիտարկչի տեսակը, օպերացիոն համակարգը, URL-հասցեները, դիտված էջերը, էջերում անցկացրած ժամանակը և նմանատիպ այլ տվյալներ:
  GA4-ում IP հասցեները օգտագործվում են տվյալների հավաքման ընթացքում՝ գտնվելու վայրի մասին տեղեկատվություն որոշելու համար (երկիր, քաղաք, քաղաքի լայնություն և երկայնություն), ապա ջնջվում են մինչև տվյալների գրանցումը տվյալների մշակման կենտրոնում կամ սերվերում: Այս տեղեկատվությունը հավաքվում է cookie ֆայլերի և նմանատիպ տեխնոլոգիաների միջոցով, փոխանցվում է Google-ին և մշակվում է ապանձնավորված հաշվետվություններ և վիճակագրություն ձևավորելու համար, որոնք մենք օգտագործում ենք վերլուծական նպատակներով:
  GA4-ին չեն փոխանցվում այնպիսի անձնական նույնացուցիչներ, ինչպիսիք են էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարները, անուն-ազգանունը և այլն: Մենք կարող ենք վերլուծության մեջ կապել գործողությունները օգտատիրոջ կեղծանուն ներքին նույնացուցիչի (user ID) հետ՝ նրա մուտք գործելուց հետո՝ օգտատիրոջ ուղին և ծառայության որակը վերլուծելու համար: Այս նույնացուցիչը չի թույլ տալիս Google-ին նույնականացնել կոնկրետ անձին:

ՄԱՐՔԵԹԻՆԳ և ԳՈՎԱԶԴ

Մենք օգտագործում ենք երրորդ կողմի մարքեթինգային և գովազդային տեխնոլոգիաներ, որոնք հաճախ կոչվում են պիքսելներ, որոնց միջոցով գովազդային նպատակներով հավաքվում է տեղեկատվություն մեր Կայքի հետ Ձեր փոխազդեցության մասին:

- **Meta Pixel, X Pixel և LinkedIn Insight Tag (նաև հայտնի որպես LinkedIn պիքսել)**. այս գործիքները հավաքում են տեղեկատվություն այն գործողությունների մասին, որոնք Դուք կատարում եք մեր Կայքում, օրինակ՝ այցելած էջերը և կատարված գնումները: Այս տեղեկատվությունը, ինչպես նաև այնպիսի տվյալներ, ինչպիսիք են Ձեր IP հասցեն, դիտարկչի տեսակը և cookie ֆայլերի եզակի նույնացուցիչները, փոխանցվում են Meta, X և

LinkedIn ընկերություններին: Այս տվյալները օգտագործվում են գովազդային և վերլուծական նպատակներով, այդ թվում՝ մեր արշավների արդյունավետությունը չափելու և Ձեզ իրենց հարթակներում նպատակային գովազդ ցուցադրելու համար:

Այս գործիքների և դրանց կողմից հավաքվող տվյալների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը կարող եք գտնել համապատասխան մատակարարների գաղտնիության քաղաքականություններում՝

- Meta Platforms, Inc. (Meta Pixel) → https://www.facebook.com/privacy/policy;
- X Corp. (X Pixel) → https://x.com/privacy;
- LinkedIn Corporation (LinkedIn Insight Tag) → https://www.linkedin.com/legal/privacy-policy:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Մենք ներդրել ենք մի շարք լուծումներ՝ մեր Կայքը պաշտպանելու և Ձեզ հարմար մուտքի հնարավորություններ տրամադրելու համար:

- **Պաշտպանություն բոտ-հարձակումներից (Google reCAPTCHA)**. մեր Կայքը և Ծառայությունները սպամից և ավտոմատ չարաշահումներից պաշտպանելու համար մենք օգտագործում ենք Google reCAPTCHA: Այս ծառայությունը գործում է ֆոնային ռեժիմում՝ տարբերելու համար իրական օգտատերերին և բոտերին: Այդ նպատակով reCAPTCHA-ն հավաքում է սարքավորումների և ծրագրային ապահովման վերաբերյալ տեղեկատվություն, օրինակ՝ սարքերի և հավելվածների տվյալներ, ինչպես նաև տեղեկատվություն Ձեր փոխազդեցության մասին Կայքի և Ծառայությունների հետ, օրինակ՝ մկնիկի շարժումները և ստեղնաշարի սեղմումների ձևաչափերը: Այս տեղեկատվությունը ուղարկվում է Google-ին վերլուծության համար:
- **Մուտք Google հաշվի միջոցով**. երբ Դուք որոշում եք օգտվել պարզեցված նույնականացումից և մուտք գործել՝ օգտագործելով Ձեր Google հաշիվը «Continue with Google» գործառույթի միջոցով, մենք ստանում ենք որոշակի տեղեկատվություն Google-ից՝ Ձեր կողմից տրամադրված թույլտվությունից հետո: Մասնավորապես, Google-ը մեզ փոխանցում է Ձեր անունը, էլեկտրոնային հասցեն և պրոֆիլի լուսանկարը: Google-ը մեզ չի փոխանցում

Ձեր գաղտնաբառը: Ձեր կողմից տրամադրված թույլտվություններից կախված՝ մենք կարող ենք նաև հարցում կատարել հաշվի լրացուցիչ տեղեկատվության հասանելիության համար: Ձեր էլեկտրոնային հասցեն օգտագործվում է՝ ստուգելու համար, թե արդյոք նման հասցեով հաշիվ արդեն գոյություն ունի մեր համակարգում, ինչպես նաև Ձեր Google հաշիվը համապատասխան գործող հաշվի հետ կապելու կամ նոր հաշիվ ստեղծելու համար:

ՏԵՂԱՅԻՆ ՊԱՀՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Մենք օգտագործում ենք Ձեր դիտարկչում ներկառուցված տվյալների տեղային պահման մեխանիզմներ, ինչպիսիք են localStorage և sessionStorage, մեր Կայքի և Ծառայությունների օգտագործման հարմարավետությունը բարձրացնելու և որոշ գործառույթների ճիշտ աշխատանքը ապահովելու համար: LocalStorage-ը թույլ է տալիս պահպանել տվյալները Ձեր դիտարկչում երկար ժամանակով (մինչև Դուք ինքներդ չմաքրեք պահոցը), իսկ sessionStorage-ը պահում է տվյալները միայն ընթացիկ սեսիայի ընթացքում (դրանք ջնջվում են ներդիրը կամ դիտարկիչը փակելիս):

Այս տեխնոլոգիաների միջոցով մենք կարող ենք հիշել Ձեր կարգավորումները և նախընտրությունները, պահել այն տեղեկատվությունը, որը Դուք մուտքագրել եք ձևերում (որպեսզի էջի պատահական վերաբեռնման դեպքում տվյալները կրկին չմուտքագրեք), պահպանել Ձեր սեսիայի նույնացուցիչը և նույնականացման թոքենները, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են մեր ծառայությունների աշխատանքի և անհատականացման համար: localStorage-ում և sessionStorage-ում պահվող տեղեկատվությունը պահպանվում է միայն Ձեր սարքում և ավտոմատ չի փոխանցվում մեր սերվերներին, եթե դա հատուկ ծրագրավորված չէ:

Այսպիսով, վերը նկարագրված տեխնոլոգիաների հիման վրա մենք կարող ենք ավտոմատ կերպով հավաքել հետևյալ կատեգորիաների անձնական տվյալներ՝

- **Տեխնիկական բնութագրերի տվյալներ**. տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են մեր ծառայությունները աշխատում Ձեր սարքում, ներառյալ բեռնման ժամանակը, սխալների հաղորդագրությունները և տեխնիկական ախտորոշումը:
- **Սարքի և դիտարկչի վերաբերյալ տեղեկատվություն**. IP հասցեներ, cookie ֆայլերի նույնացուցիչներ և մեր համակարգերի կողմից տրված օգտատերերի նույնացուցիչներ, դիտարկիչների տեսակներն ու

տարբերակները, օպերացիոն համակարգերը, սարքերի նույնացուցիչները, էկրանի լուծաչափը, ժամային գոտու կարգավորումները, լեզվական նախընտրությունները և տեղադրված դիտարկչի փլագինները:

- **Ինտերնետային կամ այլ էլեկտրոնային ցանցերում ակտիվության վերաբերյալ տեղեկատվություն**. օրինակ՝ Ձեր դիտումների պատմությունը մեր Կայքում, որոնման պատմությունը և տեղեկատվություն Ձեր փոխազդեցության մասին մեր Կայքի, Ծառայությունների, հավելվածների կամ գովազդի հետ: Սա ներառում է էջերի դիտումները, սեղմումները, սեսիաների գրանցումները և ձևերի հետ փոխազդեցության տվյալները:
- **Տեղորոշման տվյալներ**. ընդհանուր աշխարհագրական տեղեկատվություն, որը ստացվում է Ձեր IP հասցեից կամ ժամային գոտու կարգավորումներից, սակայն ոչ ճշգրիտ տեղորոշման տվյալներ, եթե այլ բան հատուկ չի պահանջվել և թույլատրվել:
- **Առևտրային տեղեկատվություն**. օրինակ՝ ձեռք բերված, ստացված կամ դիտարկված ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ տվյալներ:
- **Անվտանգության և խարդախության կանխարգելման տվյալներ**. տեղեկատվություն, որը հավաքվում է խարդախ կամ չարտոնված գործունեությունը հայտնաբերելու և կանխելու համար, ներառյալ վարքագծային մոդելները, սարքի բնութագրերը, ռիսկերի վերլուծության տվյալները և բոտերի հայտնաբերման ազդանշանները:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մենք մշտապես փորձում ենք հավասարակշռել մեր շահերը և Ձեր գաղտնիության իրավունքները: Մենք կարող ենք օգտագործել Ձեր Անձնական տեղեկատվությունը հետևյալ նպատակներով՝

- **Ծառայությունների մատուցում և ձեռնարկատիրական գործունեության իրականացման արդյունքում շահույթի ստացում**. մենք օգտագործում ենք Ձեր Անձնական տեղեկատվությունը՝ Ձեր կողմից պահանջվող Ծառայությունները տրամադրելու, դրանք գնահատելու և բարելավելու, ինչպես նաև անհատական թեստավորման արդյունքներ տրամադրելու համար:
- **Հաշվի ստեղծում և աջակցություն**. Ձեր Անձնական տեղեկատվությունը անհրաժեշտ է Ձեր հաշիվը ստեղծելու համար, որը

(անհրաժեշտության դեպքում) կպարունակի տեղեկություններ թեստավորվող երեխայի մասին: Տվյալները պահվում են մեր համակարգում՝ Ծառայությունների մատուցումն ապահովելու և դրանցից օգտվելը հեշտացնելու համար: Սա թույլ է տալիս կրկին օգտվել Ծառայություններից առանց տվյալները կրկին մուտքագրելու և հնարավորություն է տալիս ավելի արագ կատարել նոր պատվերներ կամ ապագայում ակտիվացնել լրացուցիչ գործառույթներ:

- **Ձեզ հետ կապի հաստատում**. օրինակ՝ մենք կարող ենք Ձեզ ուղարկել տեղեկատվություն մեր Ծառայությունների, միջոցառումների, սպասվող փոփոխությունների կամ բարելավումների մասին: Սա կարող է ներառել՝
  - ոչ գովազդային էլեկտրոնային նամակներ, օրինակ՝ Ծառայություններին հասանելիության կամ մեր պայմանների և քաղաքականությունների փոփոխությունների վերաբերյալ նամակներ, օրենքով պարտադիր ծանուցումներ կամ հետադարձ կապի հարցումներ,
  - մարքեթինգային հաղորդագրություններ, տեղեկատվություն մեր նոր ապրանքների և ծառայությունների, ծրագրերի, հատուկ առաջարկների և ակցիաների, ինչպես նաև Ընկերության նորությունների մասին:
- **Անվտանգության ապահովում և խարդախության կանխարգելում**. օրինակ՝ Ձեր հաշիվների, մեր Ծառայությունների և Կայքի անվտանգությունը պահպանելու, խարդախության և այլ չարտոնված օգտագործման դեպքերը հայտնաբերելու և կանխելու, ինչպես նաև օրենքների, կանոնների կամ Ծառայությունների պայմանների խախտումները բացահայտելու համար:
- **Իրավական նպատակներ**. օրինակ՝ մեր իրավական պարտավորությունների կատարում, իրավական կամ կարգավորող պահանջների պահպանում, վեճերի լուծում, մեր օգտատերերի, Ընկերության կամ երրորդ կողմերի իրավունքների, գաղտնիության, անվտանգության կամ գույքի պաշտպանություն:
- **Ձեզ աջակցել Ծառայություններից օգտվելիս**. օրինակ՝ խնդիրների լուծում և աջակցություն տրամադրել անհրաժեշտության դեպքում:
- **Վերլուծություն, զարգացում և Ծառայությունների բարելավում**. օրինակ՝ վերլուծել, թե ինչպես են օգտատերերը փոխազդում մեր Կայքի և Ծառայությունների հետ՝ հասկանալու նրանց կարիքները, հայտնաբերելու հայտնի գործառույթները, շտկելու խնդիրները և ընդհանուր օգտատիրոջ փորձը բարելավելու համար, ինչպես նաև զարգացնելու նոր գործառույթներ կամ բարելավելու գործողները, ապահովելու ծառայությունների որակի վերահսկում կամ վերապատրաստելու մեր անձնակազմը:

- **Մարքեթինգ և գովազդ**. մենք կարող ենք օգտագործել ավտոմատ հավաքված անձնական տեղեկատվությունը (օրինակ՝ երրորդ կողմի տեխնոլոգիաների միջոցով, ներառյալ Meta Pixel, X Pixel և LinkedIn Insight Tag)՝ մեր գովազդային արշավները օպտիմալացնելու համար: Այս տեխնոլոգիաները թույլ են տալիս իրականացնել ռեմարքեթինգ, հետևել կոնվերսիաներին, գնահատել գովազդի արդյունավետությունը և Ձեզ ցուցադրել անհատականացված գովազդ համապատասխան հարթակներում՝ հիմնվելով մեր Կայքում Ձեր գործողությունների վրա:

Միևնույն ժամանակ, **մենք չենք օգտագործում այն անձնական տեղեկատվությունը, որը Դուք մեզ տրամադրում եք անմիջապես (օրինակ՝ Ձեր անունը, կոնտակտային տվյալները, հաշվի տվյալները, վճարային տվյալները, Ձեր երեխայի մասին տեղեկատվությունը, թեստավորման գործընթացի տեսագրությունները, հեռախոսազրույցների ձայնագրությունները և այլն) մարքեթինգային և գովազդային նպատակներով և չենք փոխանցում այն երրորդ կողմերին նման նպատակներով:**

- **Ցանկացած այլ նպատակներով, որոնց համար Դուք տրամադրում եք Ձեր առանձին համաձայնությունը:**

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մենք կարող ենք բացահայտել Ձեր Անձնական տեղեկատվությունը այլ անձանց հետևյալ դեպքերում՝

- **Մեր ծառայությունների մատակարարներին և կապալառուներին** (այսուհետ միասին՝ «ծառայությունների մատակարարներ»), որոնց հետ մենք կնքել ենք պայմանագրեր, ներառյալ հոսթինգի, ամպային ծառայությունների, վերլուծության, բովանդակության մատուցման, անվտանգության աջակցման և մոնիթորինգի, վճարումների և գործարքների, ինչպես նաև այլ հարակից ծառայությունների մատակարարներին՝ վերը նշված նպատակների համար: Այս ծառայությունները անհրաժեշտ են, օրինակ՝ մեր Կայքի և Ծառայությունների աշխատանքի ապահովման և վերլուծության, օգտատերերի նույնականացման, Կայքի և Ծառայությունների անվտանգության և ամբողջականության պահպանման, խարդախության կանխարգելման, վճարումների մշակման, հաճախորդների աջակցման և

օգտատերերի հետ հաղորդակցության, մարքեթինգի և գովազդի, ինչպես նաև իրավական կամ կարգավորող պահանջների պահպանման և այլ նպատակների համար՝ կախված Ձեր հետ մեր փոխգործակցությունից: Այս մատակարարների հասանելիությունը Ձեր Անձնական տվյալները սահմանափակվում է միայն այն տեղեկատվությամբ, որը ողջամտորեն անհրաժեշտ է նրանց՝ իրենց սահմանափակ գործառույթը իրականացնելու համար և այն նպատակների շրջանակում, որոնց համար այն հավաքվել է:

- **Փոխկապակցված ընկերություններին (գործընկերներ, որոնք նպաստում են Մեր կողմից ծառայությունների մատուցմանը) կամ բիզնեսի փոխանցման հետ կապված**. մենք կարող ենք տրամադրել հասանելիություն և/կամ փոխանցել անձնական տվյալները ընկերության վաճառքի, միավորման կամ կառավարման փոփոխության դեպքում, այդ թվում՝ այն ստորաբաժանման, որը պատասխանատու է այն ծառայությունների համար, որոնց հետ կապված է Ձեր Անձնական տվյալները, բացառապես այն նպատակներով, որոնց համար այն հավաքվել է:
- **Իրավական նպատակներով, այդ թվում՝ պետական մարմիններին**. (i) օրենքներին համապատասխանելու կամ իրավական հարցումներին և դատական գործընթացներին արձագանքելու համար, (ii) Ընկերության իրավունքներն ու գույքը պաշտպանելու համար, այդ թվում՝ մեր համաձայնագրերի, քաղաքականությունների և ծառայությունների պայմանների կատարման ապահովման նպատակով, (iii) իրավական պատասխանատվությունից պաշտպանվելու համար, կամ (iv) Ընկերության, նրա հաճախորդների կամ ցանկացած անձի անձնական անվտանգության պաշտպանության համար, ներառյալ՝ ենթադրյալ խարդախության, հետապնդման կամ որևէ օրենքի կամ կանոնի խախտումների հետաքննությունը:
- **Գովազդային և մարքեթինգային գործընկերներին**. Մեր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տարբեր տեղեկատվական միջոցներով կարող է ներկայացվել գովազդ՝ հասարակության լայն շրջանակին Մեր և Մեր կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու նպատակով՝ ՀՀ օրենսդրության համապատասխան կարգավորումների պահպանմամբ:

Մենք կարող ենք Օգտատիրոջը առաջարկել մասնակցելու Մեր մարքեթինգային և գովազդային նախաձեռնություններին, ներառյալ՝ տեսահոլովակների, լուսանկարների, հարցազրույցների, հրապարակումների և այլ գովազդային նյութերի ստեղծմանը և տարածմանը: Օգտատիրոջ անհատականացնող տվյալների, պատկերի, ձայնի, տեսաձայնագրության կամ նրա մասնակցությամբ ստեղծված այլ նյութերի օգտագործումը մարքեթինգային նպատակներով իրականացվում է բացառապես Օգտատիրոջ (իսկ օրենքով նախատեսված

դեպքերում՝ նաև նրա օրինական ներկայացուցչի) նախնական, հստակ և ազատ արտահայտված համաձայնության հիման վրա:

Եթե Օգտատերը նման համաձայնություն չի տրամադրում, Մենք չենք օգտագործում նրա անհատականացնող կամ անձնական տվյալները մարքեթինգային և գովազդային նպատակներով: Այդ դեպքում Մենք կարող ենք օգտագործել միայն անձը չնույնականացնող, ընդհանրացված կամ վիճակագրական բնույթի տվյալներ, օրինակ՝ Մեր ծառայություններից օգտվող անձանց ընդհանուր քանակի, ծառայությունների օգտագործման հաճախականության կամ նմանատիպ ոչ անձնական տեղեկատվության վերաբերյալ տվյալներ:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դուք ունեք որոշակի իրավունքներ Ձեր Անձնական տեղեկատվության վերաբերյալ, օրինակ՝

- Ձեր Անձնական տվյալները հասանելիություն, դրա ուղղում, թարմացում կամ ջնջում պահանջելու իրավունք,
- Եթե մենք հավաքել և մշակել ենք Ձեր Անձնական տվյալները Ձեր համաձայնությամբ, Դուք կարող եք ցանկացած պահի հետ վերցնել Ձեր համաձայնությունը: Ձեր համաձայնության հետկանչը չի ազդի այն մշակման օրինականության վրա, որը մենք իրականացրել ենք մինչև այդ հետկանչը,
- Իրավունք՝ որոշակի գաղտնիության հարցումներ ներկայացնելու լիազորված ներկայացուցչի միջոցով,
- Իրավունք՝ չտուժելու խտրական վերաբերմունքից այն իրավունքների իրականացման ժամանակ, որոնք Ձեզ տրված են գործող գաղտնիության օրենսդրությամբ,
- Իրավունք՝ բողոքարկելու այն որոշումը, որը մենք ընդունում ենք Ձեր իրավունքների վերաբերյալ հարցման կապակցությամբ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ մեր կողմից հավաքված Անձնական տվյալների հետագա օգտագործման կամ ապագայում դրա հավաքման թույլտվությունից հրաժարվելը, ինչպես նաև Անձնական տվյալների ջնջումը կարող է զրկել մեզ հնարավորությունից տրամադրելու Ձեր

կողմից պահանջված Ծառայությունները, օրինակ՝ իրականացնել թեստավորում և/կամ տրամադրել դրա արդյունքները, ինչպես նաև պահպանել Ձեր հաշվի գործունակությունը: Այս դեպքում մենք կդադարեցնենք Ձեր կողմից պահանջված Ծառայությունների մատուցումը՝ մեր Օգտատիրոջ համաձայնագրի համաձայն, և կջնջենք Ձեր կողմից նշված Անձնական տվյալները

Մենք չենք զբաղվում պրոֆիլավորմամբ, որը օգտագործում է Ձեր անձնական տեղեկատվությունը ավտոմատ որոշումներ ընդունելու համար, որոնք ունեն իրավական կամ նմանատիպ նշանակալի հետևանքներ:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Վերոնշյալ իրավունքներից որոշները կարող եք իրականացնել Ձեր հաշվի միջոցով, սակայն մյուսների իրականացման համար անհրաժեշտ կլինի մեզ ուղարկել հարցում info@worldofgeniuses.am. էլեկտրոնային հասցեին: Ձեր հարցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում մենք կպատասխանենք Ձեր հարցմանը, որի վերաբերյալ տեղեկատվությունը Ձեզ տրամադրվելու է անվճար:

Ձեր որոշ իրավունքների իրականացման համար մեզ կարող է անհրաժեշտ լինել հաստատել Ձեր ինքնությունը կամ հավաքել ավելի շատ անձնական տվյալներ, քան ներկայումս ունենք, որպեսզի համոզվենք, որ Դուք ունեք պահանջվող անձնական տեղեկատվությանը հասանելիության իրավունք և որ որևէ այլ անձ չի փորձում ներկայանալ որպես Դուք: Սա կօգնի մեզ պաշտպանել Ձեր տվյալները խարդախ հարցումներից: Ցանկացած այլ տվյալ մշակելիս Մենք կստանանք Ձեր համաձայնությունը՝ առանց, որի Ձեր տվյալները չեն մշակվի:

Բողոքարկումներ: Եթե մենք մերժում ենք Ձեր հարցման հիման վրա որևէ գործողություն կատարել, Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը՝ ուղարկելով նամակ info@worldofgeniuses.am. էլեկտրոնային հասցեին:

Ձեր գրավոր պահանջի հիման վրա Մենք պարտավոր ենք անձնական տվյալները տրամադրելը, ուղղելը, ուղեփակելը կամ ոչնչացնելը մերժելու դեպքում հարցումն ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում տրամադրել պատճառաբանված գրավոր որոշում՝ հղում կատարելով այն օրենքի դրույթներին, որոնք հիմք են հանդիսացել որոշում ընդունելու համար:

Նման բողոքարկման մեջ Դուք պետք է՝ (1) տրամադրեք բավարար տեղեկատվություն, որպեսզի մենք կարողանանք հաստատել, որ Դուք այն անձն եք, ում վերաբերում է նախնական հարցումը, և նույնականացնել այդ հարցումը, և (2) ներկայացնեք Ձեր բողոքարկման հիմքերի նկարագրությունը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ձեր բողոքարկումը ենթակա է այն իրավունքներին և պարտականություններին, որոնք Ձեզ տրամադրված են կիրառելի գործող օրենսդրությամբ: Մենք պատասխանում ենք բոլոր բողոքարկման հարցումներին հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան օրենքով սահմանված ժամկետներում:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ)

Մենք պահպանում ենք մեր պարտավորությունները՝ երեխաների անձնական տեղեկատվության պաշտպանության և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահպանման ուղղությամբ:

Սույն բաժինը նկարագրում է, թե ինչ «անձնական տվյալը» ենք մենք հավաքում թեստավորվող երեխաների մասին և նրանցից, ինչպես ենք օգտագործում այդ անձնական տեղեկատվությունը, ինչպես նաև դրա բացահայտման պրակտիկան:

Մեր երեխաների թեստավորման ծառայությունները տրամադրվում են միայն Ծնողների վերահսկողությամբ, և մենք չենք հավաքում անձնական տեղեկատվություն անմիջապես 18 տարեկանից ցածր երեխաներից առանց նրանց Ծնողների համաձայնության: Թեստավորման ծառայության ձեռքբերումը, Ծնողի հաշվի մեջ երեխաների անձնական տվյալների ավելացումը, այդ հաշիվների օգտագործումը, ինչպես նաև Ծառայություններից և Կայքից օգտվելու ընթացքում Ընկերության հետ ցանկացած փոխգործակցություն և հաղորդակցություն իրականացվում է բացառապես Ծնողի կողմից, որը գործում է իր երեխայի անունից և որոշումներ է ընդունում նրա շահերից ելնելով: Թեստավորման գործընթացը իրականացվում է բացառապես մեծահասակին պատկանող սարքի վրա, և Դուք համաձայնում և պարտավորվում եք պահպանել այս պահանջները:

Մենք խրախուսում ենք ծնողներին և օրինական խնամակալներին վերահսկել իրենց երեխաների ինտերնետի օգտագործումը և նպաստել սույն Գաղտնիության քաղաքականության պահպանմանը՝ իրենց երեխաներին հորդորելով երբեք

չտրամադրել անձնական տվյալներն առանց ծնողի կամ օրինական խնամակալի ներկայության և համաձայնության:
«Նուբարյան Լաբ» ՍՊԸ -ն հանդիսանում է «Հանճարների աշխարհ» նախագծի շրջանակում Quantum G թեստավորման ծառայության բացառիկ դիստրիբյուտորը ՀՀ տարածքում և այն օպերատորը, որը հավաքում է երեխաներից անձնական տվյալներ և պահպանում այն https://worldofgeniuses.am կայքի և առցանց ծառայության միջոցով՝ սահմանումներին համապատասխան, ինչպես նաև այն սուբյեկտը, որի անունից նման տեղեկատվությունը կարող է հավաքվել և պահպանվել մեր ծառայությունների մատակարարների կողմից: Մենք ընդունում ենք Ծնողների հարցումները՝ կապված Գաղտնիության քաղաքականության և երեխաների վերաբերյալ տեղեկատվության օգտագործման հետ՝ info@worldofgeniuses.am էլեկտրոնային հասցեով:

18 տարեկանից ցածր երեխաներից անձնական տվյալների հավաքումը, օգտագործումը և բացահայտումը իրականացվում են *«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ* օրենքի, դրա հիման վրա ընդունված կանոնների և այլ կիրառելի օրենքների համաձայն՝ երեխայի Ծնողի հաստատված համաձայնությունը ստանալուց հետո: Նման համաձայնություն չտրամադրելու դեպքում մենք չենք կարողանա մատուցել Ձեր կողմից պահանջված Ծառայությունները:

Եթե մեզ հայտնի դառնա, որ մենք հավաքել ենք երեխայի մասին տեղեկատվություն որոնք չեն համապատասխանում օրենքի պահանջներին, մենք կամ կջնջենք այդ տեղեկատվությունը, կամ անմիջապես կպահանջենք երեխայի Ծնողի համաձայնությունը նման հավաքման համար:

Թեստավորվող երեխայի շահերի, անվտանգության և բարեկեցության ապահովման, ինչպես նաև գործընթացի թափանցիկության նպատակով թեստավորումը իրականացվում է բացառապես նրա Ծնողի ներկայությամբ: Ծնողը օգնում է թեստավորվող երեխային նախապատրաստվել՝ համաձայն Օգտատիրոջ համաձայնագրի և Կայքում հրապարակված պատրաստման և թեստավորման անցման վերաբերյալ առաջարկությունների, ապահովում է դրանց պահպանումը և հետևում է թեստավորման ընթացքին:

Կայքը չի թույլատրում թեստավորվող երեխային իր անձնական տեղեկատվությունը դարձնել հանրամատչելի:

Ի՞ՆՉ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՍԻՆ

Կայքի միջոցով մենք նախատեսում ենք ստանալ Ձեր երեխայի անձնական տվյալների հետևյալ տեսակները (այսուհետ միասին՝ «Երեխայի անձնական տվյալներ »)՝

1

Երեխայի անձնական տվյալները, որը տրամադրվում է Ծնողի կողմից անմիջապես

- **Լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը և սեռը**, որոնք Դուք՝ որպես Ծնող, տրամադրում եք մեզ, օրինակ՝ երբ դիմում եք կամ գնում եք թեստավորման ծառայություններ, տալիս եք Ձեր ծնողական համաձայնությունը երեխայի անձնական տվյալների հավաքման, օգտագործման և բացահայտման համար, իրականացնում եք Ձեր հաշվում, կամ թարմացնում կամ փոփոխում եք երեխայի մասին տեղեկատվությունը այդ հաշվում:

Մենք կարող ենք օգտագործել այս տեղեկատվությունը Ծառայությունները տրամադրելու, հաշիվը պահպանելու, իրավական նպատակների համար, ինչպես նաև Ձեզ աջակցություն և օգնություն տրամադրելու՝ Ծառայություններից օգտվելիս(ավելի մանրամասն տես «Ինչպես ենք օգտագործում Երեխայի անձնական տվյալները» բաժնում):

2

Անձնական տվյալներ, որը հավաքվում է երեխայից՝ նրա Ծնողի ներկայությամբ

- **Տեսանյութեր, որոնք ավտոմատ կերպով ստեղծվում են երեխայի թեստավորման տեսանկարահանման ընթացքում, ինչպես նաև դրանցից ստացված լուսանկարներ և աուդիոֆայլեր**. մեր Ծառայությունների մատուցման ընթացքում մենք հավաքում ենք Ձեր երեխայի թեստավորման գործընթացի տեսագրություններ, որոնք պարունակում են երեխայի պատասխանները, գործողությունները,

փոխազդեցությունները և վարքագիծը, ինչպես նաև այդ տեսագրություններից ստացված լուսանկարներ և աուդիոֆայլեր:

Մենք կարող ենք օգտագործել այս նյութերը Ծառայությունների տրամադրման, իրավական նպատակների համար, ինչպես նաև Ձեզ աջակցություն և օգնություն տրամադրելու՝ Ծառայություններից օգտվելիս:

Մենք կարող ենք նաև ակամայից ստանալ այլ անձնական տեղեկատվություն, որը մենք չենք պահանջում և որը Դուք՝ որպես Ծնող, կարող եք մեզ տրամադրել Ձեր նախաձեռնությամբ, օրինակ՝ Ծառայություններից օգտվելիս, մեզ հետ էլեկտրոնային փոստով կապ հաստատելիս, Ձեր երեխայի թեստավորման ընթացքում, կամ որը Ձեր երեխան կարող է մեզ փոխանցել Ձեր ներկայությամբ, օրինակ՝ թեստը հանձնելիս:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մենք կարող ենք օգտագործել Երեխայի անձնական տեղեկատվությունը հետևյալ նպատակներով՝

- **Ծառայությունների մատուցում և ձեռնարկատիրական գործունեության արդյունքում շահույթի ստացում**. մենք օգտագործում ենք Երեխայի անձնական տվյալները՝ Ձեր կողմից պահանջվող Ծառայությունները տրամադրելու, դրանք գնահատելու և բարելավելու, ինչպես նաև անհատական թեստավորման արդյունքներ տրամադրելու համար:
- **Ծնողի օգտահաշվի աջակցություն**. անձնական տվյալները անհրաժեշտ է Ծնողի հաշվի ստեղծելու համար: Տվյալները պահվում են մեր համակարգում՝ Ծառայությունների մատուցումն ապահովելու և դրանցից օգտվելը հեշտացնելու համար: Սա թույլ է տալիս կրկին օգտվել Ծառայություններից առանց տվյալները կրկին մուտքագրելու, ինչպես նաև հնարավորություն է տալիս ավելի արագ կատարել նոր պատվերներ, որոնք համապատասխանում են երեխայի տարիքին, կամ ապագայում ակտիվացնել լրացուցիչ գործառույթներ, օրինակ՝ ավելի բարձր տարիքային խմբի թեստ հանձնելը կամ նոր ծառայություններից օգտվելը:
- **Իրավական նպատակներ**. օրինակ՝ մեր իրավական պարտավորությունների կատարում, իրավական կամ կարգավորող պահանջների պահպանում, ինչպես նաև մեր օգտատերերի, Ընկերության

կամ երրորդ կողմերի իրավունքների, գաղտնիության, անվտանգության կամ գույքի պաշտպանություն:

- **Ձեզ աջակցել Ծառայություններից օգտվելիս**. օրինակ՝ խնդիրների լուծում և աջակցություն տրամադրել անհրաժեշտության դեպքում:
- **Ցանկացած այլ նպատակներով, որոնց համար Դուք տրամադրում եք Ձեր առանձին համաձայնությունը:**

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մենք չենք վաճառում, փոխանակում կամ վարձակալությամբ տրամադրում երրորդ կողմերին երեխայից հավաքված անձնական տվյալները, ինչպես նաև չենք փոխանցում Երեխայի անձնական տվյալները շահույթ ստանալու նպատակով :

Մենք նաև չենք դարձնում Ձեր կողմից մեզ տրամադրված Երեխայի անձնական տվյալները հանրամատչելի որևէ ձևով, բացառությամբ այն դեպքերի, երբ Դուք տալիս եք դրա համար առանձին համաձայնություն (օրինակ՝ երբ հրապարակվում են երեխաների և Ծնողների կարծիքները):

Մենք կարող ենք բացահայտել երեխայից հավաքված անձնական տվյալները այլ անձանց հետևյալ դեպքերում՝

- **• Մեր ծառայությունների մատակարարներին և կապալառուներին** (այսուհետ միասին՝ ծառայությունների մատակարարներ), որոնք աջակցում են Կայքի կամ Ծառայությունների ներքին գործառույթներին և չեն օգտագործում կամ բացահայտում այդ տեղեկատվությունը կոնկրետ անձի հետ կապ հաստատելու, վարքագծային գովազդի միջոցով նրա պրոֆիլ կազմելու կամ որևէ այլ նպատակով:

Ծառայությունների մատակարարների հասանելիությունը Երեխայի անձնական տվյալները սահմանափակվում է միայն այն տեղեկատվությամբ, որը ողջամտորեն անհրաժեշտ է նրանց՝ իրենց սահմանափակ գործառույթը իրականացնելու համար և այն նպատակների շրջանակում, որոնց համար այն հավաքվել է:

Կայքի կամ Ծառայությունների ներքին գործառույթների աջակցությունը ներառում է այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ են՝

- (i) Կայքի կամ Ծառայությունների աշխատանքը պահպանելու կամ վերլուծելու համար,
- (ii) ցանցային հաղորդակցությունները իրականացնելու համար,
- (iii) օգտատերերի նույնականացման կամ Կայքում կամ Ծառայություններում բովանդակությունը անհատականացնելու համար,
- (iv) Կայքում կամ Ծառայություններում կոնտեքստային գովազդ ցուցադրելու կամ դրա հաճախականությունը սահմանափակելու համար,
- (v) օգտատերերի, Կայքի կամ Ծառայությունների անվտանգության և ամբողջականության պաշտպանման համար,
- (vi) իրավական կամ կարգավորող պահանջների պահպանման համար:

- **Աֆիլիացված ընկերություններին (գործընկերներ, որոնք նպաստում են Մեր կողմից ծառայությունների մատուցմանը) կամ բիզնեսի փոխանցման հետ կապված**. մենք կարող ենք բացահայտել և/կամ փոխանցել Երեխայի անձնական տվյալներն աֆիլիացված ընկերություններին կամ ընկերության վաճառքի, միավորման կամ կառավարման փոփոխության դեպքում, ինչպես նաև այն ստորաբաժանման դեպքում, որը պատասխանատու է այն ծառայությունների համար, որոնց հետ կապված է այդ անձնական տվյալները ՝ բացառապես այն նպատակներով, որոնց համար այն հավաքվել է:
- **Իրավական նպատակներով, այդ թվում՝ պետական մարմիններին**. (i) օրենքներին համապատասխանելու կամ իրավաչափ հարցումներին և դատական գործընթացներին արձագանքելու համար, (ii) Ընկերության իրավունքներն ու գույքը պաշտպանելու համար, այդ թվում՝ մեր համաձայնագրերի, քաղաքականությունների և ծառայությունների պայմանների կատարման ապահովման նպատակով, (iii) իրավական պատասխանատվությունից պաշտպանվելու համար, կամ (iv) Ընկերության, նրա հաճախորդների կամ ցանկացած անձի անձնական անվտանգության պաշտպանության համար, ներառյալ ենթադրյալ խարդախության, հետապնդման կամ որևէ օրենքի կամ կանոնի խախտումների հետաքննությունը:

ԾՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Դուք կարող եք ունենալ որոշակի իրավունքներ Ձեր երեխայի Անձնական տվյալների վերաբերյալ: Կիրառելի լինելու դեպքում Ծնողը կարող է պահանջել

երեխայի Անձնական տվյալների դիտում, ուղղում կամ ջնջում, ինչպես նաև հրաժարվել երեխայի Անձնական տվյալների հետագա հավաքումից կամ օգտագործումից կամ իրականացնել ՀՀ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքով նախատեսված այլ իրավունքներ՝ ուղարկելով նամակ info@worldofgeniuses.am էլեկտրոնային հասցեին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ երեխայի Անձնական տվյալների հետագա օգտագործման կամ ապագայում դրա հավաքման թույլտվությունից հրաժարվելը, ինչպես նաև դրա ջնջումը կարող է զրկել մեզ հնարավորությունից տրամադրելու Ձեր կողմից պահանջված Ծառայությունները, օրինակ՝ իրականացնել թեստավորում և/կամ տրամադրել դրա արդյունքները, կամ ապահովել հաշվի գործունակությունը: Այս դեպքում մենք կդադարեցնենք Ձեր կողմից պահանջված Ծառայությունների մատուցումը՝ մեր Օգտատիրոջ համաձայնագրի համաձայն, և կջնջենք Ձեր կողմից տրամադրված երեխայի Անձնական տվյալները :

Այս իրավունքների իրականացման համար մեզ կարող է անհրաժեշտ լինել հաստատել Ձեր ինքնությունը՝ համոզվելու համար, որ Դուք իրավունք ունեք հասանելիություն ունենալ երեխայի Անձնական տվյալներին: Սա անվտանգության միջոց է, որը երաշխավորում է, որ երեխայի Անձնական տվյալները չի բացահայտվի այն անձանց, որոնք դրա իրավունքը չունեն: Ձեր ինքնությունը հաստատելու համար մեզ կարող է անհրաժեշտ լինել հավաքել Ձեզանից ավելի շատ անձնական տվյալներ, քան ներկայումս ունենք:

Եթե մեր կողմից երեխաների անձնական տվյալների հավաքման, օգտագործման կամ բացահայտման պրակտիկայում կատարվեն էական փոփոխություններ, որոնց համար Ծնողը նախկինում տվել է իր համաձայնությունը, մենք Ծնողին կուղարկենք համապատասխան ծանուցում նրա հաշվին կցված էլեկտրոնային հասցեին և կպահանջենք հաստատված ծնողական համաձայնություն:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Մենք կպահպանենք Ձեր Անձնական տվյալները և Ձեր երեխայի Անձնական տվյալները այն ժամանակահատվածում, որն անհրաժեշտ է այն նպատակների համար, որոնց համար այն հավաքվել է, եթե չպահանջվի այդ տեղեկատվության ավելի երկար պահպանում իրավական, համապատասխանության կամ անվտանգության նպատակներով: Օրինակ՝ մենք կարող ենք պահպանել նշված անձնական տվյալները՝

- երբ ունենք իրավական պարտավորություն դա անել (օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների կամ այլ հաշվետվությունների նպատակներով, Ծառայությունների մատուցումը հաստատելու համար, կամ եթե ստանում ենք դատարանի որոշում՝ անձնական տվյալները ավելի երկար պահելու վերաբերյալ),
- հարցումների և բողոքների քննարկման և լուծման համար (օրինակ՝ եթե Դուք ներկայացնում եք բողոք),
- մեր բիզնեսի, Ծառայությունների և Կայքի անվտանգության, պաշտպանվածության և ամբողջականության ապահովման, ինչպես նաև մեր և այլ անձանց իրավունքների և գույքի պաշտպանության համար (օրինակ՝ եթե հայտնաբերում ենք մեր Ծառայությունների չարաշահում կամ անսովոր ակտիվություն Ձեր հաշվում կամ մեզ հետ փոխգործակցության ընթացքում),
- դատական, կարգավորող կամ այլ իրավական գործընթացների համար (օրինակ՝ մենք կպահպանենք Ձեր տվյալները, եթե առկա է ընթացիկ դատական պահանջ և այդ տեղեկատվությունը կապված է այդ պահանջի հետ):

Վերոնշյալ պահպանման ժամկետների ավարտից հետո մենք կձեռնարկենք ողջամիտ միջոցներ՝ Ձեր Անձնական տվյալները և Երեխայի անձնական տվյալները ջնջելու այնպես, որ դրանք չպահպանվեն վերականգնվող ձևով և չլինեն հասանելի սովորական գործունեության ընթացքում:

Մենք պահպանում ենք Ձեր հաշվի տվյալները մինչև հաշվի ջնջումը: Եթե որոշեք ջնջել Ձեր հաշիվը, խնդրում ենք ընտրել «Ջնջել հաշիվը» տարբերակը կարգավորումներում: Անվտանգության նպատակներով, համոզվելու համար, որ ջնջման հարցումը իսկապես ներկայացրել եք Դուք, մենք Ձեր էլեկտրոնային հասցեին կուղարկենք եզակի կոդ, որը պետք է օգտագործեք Ձեր որոշումը հաստատելու համար: Դրանից հետո նշված հաշիվը և դրա տվյալները կնշանակվեն ջնջման՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում:

Ջնջման հարցումից հետո այդ 30 օրացուցային օրվա ընթացքում Ձեր հաշվում կցուցադրվի նախատեսված ջնջման մասին ծանուցում՝ նշելով վերջնական ջնջման ամսաթիվը: Այդ ընթացքում Դուք կարող եք չեղարկել ջնջումը՝ սեղմելով «Վերականգնել հաշիվը» կոճակը, որից հետո Ձեր էլեկտրոնային հասցեին կուղարկվի հաստատման կոդ: Խնդրում ենք մուտքագրել ստացված կոդը՝ Ձեր հաշիվը վերականգնելու և նախատեսված ջնջումը չեղարկելու համար:

Եթե նշված 30-օրյա ժամանակահատվածում չօգտագործեք հաշվի վերականգնման հնարավորությունը, մենք կջնջենք Ձեր հաշիվը և դրա տվյալները վերջնականապես՝ բացառությամբ որոշ տվյալների, որոնք հավաքվել են մեր Կայքի և Ծառայությունների աշխատանքի բարելավման, դրանց հետագա զարգացման, անվտանգության պահպանման և խարդախության կանխարգելման, կամ այլ իրավական և/կամ մեր օրինական նպատակների համար: Օրինակ՝ մենք պարտավոր ենք պահպանել նախկին գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակներով և Ծառայությունների մատուցումը հաստատելու համար:

Ձեր հաշվի ջնջումը վերջնական է: Հաշվի ջնջումից հետո մենք չենք կարող այն վերականգնել կամ կրկին ակտիվացնել, ինչպես նաև չենք կարող վերականգնել Ձեր տվյալները:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Նուբարյան Լաբ» ՍՊԸ -ն կիրառում է տեխնիկական, վարչական և ֆիզիկական ողջամիտ միջոցներ, որոնք նախատեսված են անձնական տվյալների կորուստից, չարաշահումից, չարտոնված հասանելիությունից, բացահայտումից, փոփոխումից կամ ոչնչացումից պաշտպանելու համար:

Ընկերության կողմից հավաքված անձնական տվյալները պահպանվում և մշակվում է համապատասխան սերվերներում՝ կիրառելով ողջամիտ անվտանգության միջոցներ, որոնք անհրաժեշտ են այն կորուստից, չարաշահումից, չարտոնված հասանելիությունից, բացահայտումից, փոփոխումից կամ ոչնչացումից պաշտպանելու համար: Այդ միջոցները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ անձնական տվյալների կոդավորումը դրա պահպանման և փոխանցման ընթացքում, հնարավոր և նպատակահարմար դեպքերում դրա ապանձնավորում կամ անանունացում, տվյալների նվազագույնի հասցման պրակտիկաներ և այլևս անհրաժեշտ չլինող տեղեկատվության ջնջում, ինչպես նաև սահմանափակ հասանելիության վերահսկում:

Այնուամենայնիվ, անվտանգության որևէ միջոց կամ ինտերնետի միջոցով տվյալների փոխանցման որևէ մեթոդ 100% անվտանգ չէ: Բացի այդ, Դուք ինքնուրույն պատասխանատու եք Ձեր օգտանունը (մուտքանունը) և գաղտնաբառը պաշտպանելու, Ձեր սարքերին հասանելիությունը

սահմանափակելու, ինչպես նաև սեսիաների ավարտից հետո կայքերից և հաշիվներից դուրս գալու համար:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՅՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մենք կարող ենք անհրաժեշտության դեպքում թարմացնել մեր Գաղտնիության քաղաքականությունը, այդ թվում՝ կատարել էական փոփոխություններ: Այդ դեպքում մենք Կայքում հրապարակում ենք քաղաքականության թարմացված տարբերակը՝ փոփոխված ուժի մեջ մտնելու ամսաթվով: Բոլոր փոփոխություններն ու թարմացումները ուժի մեջ են մտնում անմիջապես դրանց հրապարակումից հետո: Եթե կիրառելի օրենսդրությունը պահանջում է ծանուցման այլ ձև, մենք համապատասխան կերպով կտեղեկացնենք Ձեզ:

Եթե Դուք շարունակում եք օգտվել մեր Ծառայություններից Գաղտնիության քաղաքականության որևէ փոփոխության հրապարակումից հետո, բոլոր կատարված փոփոխությունները կկիրառվեն Ձեր կողմից Ծառայությունների օգտագործման նկատմամբ:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՄԵԶ ՀԵՏ

Եթե ունեք որևէ հարց, առաջարկ կամ բողոք՝ կապված մեր կողմից անձնական տեղեկատվության հավաքման, օգտագործման կամ պահպանման հետ, կամ ցանկանում եք օգտվել Ձեր Անձնականտվյալների վերաբերյալ Ձեր որևէ իրավունքից, կամ Ձեզ անհրաժեշտ է աջակցություն խնդիրների լուծման համար, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ՝ info@worldofgeniuses.am էլեկտրոնային հասցեով: